

ԵՆՈՎՔ ՊԱԼԱՏԵԱՆ ԲՈՒԴԱՂԵԱՆԻ ԿՏԱԿԸ

Հին սերունդի մէջ եղել են մարդիկ, որոնք իրենց բնական խելօք հեռատեսութեամբ և ճշմարիտ ազգային հայ սրտով աշխատել են կենդանի ժամանակ իրենց հարստութիւնից օրինական ճանապարհով բաժին հանել մեր ազգային եկեղեցական հաստատութիւններին և զարկ տալ նրանց ազգօգուտ գործառնութեանց: Յիրաւի այդպիսի ընդամիշտ յիշատակութեան արժանի առաքինի անհատներից է եղել Սաղիանում ծնուած Բագու քաղաքի յայտնի վաճառական հանգուցեալ Ենօք Պալատեան Բուդաղեանցը: Հանգուցեալի մարմինը, որ ժամանակաւորապէս հողին էր յանձնուած Բագու քաղաքի հին գերեզմանատանը, անցած հոկտեմբերի 18-ին փոխադրել են ու թաղել նոյն քաղաքի նորակառոյց Ս. Թադէոս և Ս. Բարդուղիմէոս եկեղեցու գաւթում: Այդ նոր եկեղեցին կառուցուել է հանգուցեալի կտակած դումարով, և նորա հանգիստւոր օծումն կատարել է հետեւեալ օրը, հոկտեմբերի 19-ին, թեմի առաջնորդ Տ. Կարապետ եպիսկոպոսը:

Հանգուցեալ Ենովք Բուդաղեանի մասին թող պատմէ նորա թողած կտակը, որի զլիսաւոր կէտերն առաջ ենք բերում այստեղ:

Հանգուցեալը Օղեսոս քաղաքում Իսիդոր Կորբաղին նօտարի մօտ 1899 թ. Մայիսի 31-ին անում է հետեւեալ կտակը. «Ես, ներքոյ ստորագրողս, Բագուի վաճառական Ենովք Պալատեան Բուդաղեանցս առողջ գատողութեամբ և հաստատուն կամքով ի դէպս իմ մահուան սոյն հոգևոր կտակով որոշում եմ. Առաջին, Բագուի Քաղաքային Ինքնավարութիւնը Հայոց-Լուսաւորչական եկեղեցու շինութեան համար տեղ է յատկացրել, բայց միջոց չունենալով, չէ կարող ձեռնարկել շինութեան, ուստի կամենալով կառուցանել այդ եկեղեցին իմ սեպհական միջոցներով, իմ

այդ ցանկութիւնն իրագործելու համար ես կտակում եմ մի հարիւր յիսուն հազար ո. (150,000) այն պայմանով, որ եթէ իմ կենդանութեան ժամանակ սկսեմ այդ շինութիւնը և չկարողանամ վերջացնել, այն զէպքում կտակակատարներս պէտք է շարունակեն և կառուցանեն կտակածս փողով: Յանկանում եմ որ այդ եկեղեցին կառուցուի Ս. Թադէոս և Ս. Բարգուղիմէոս առաքեալների անունով, և որ մարմարէ տախտակի վրայ լինի մակագրուած, որ ինքս կառուցի այդ եկեղեցին իմ միջոցներով ի յիշատակ իմ հանգուցեալ ծնողների և իմ դաստիարակիչ հանգուցեալ եղբօրս Թադէոս աւագ քահանայ Բուդաղեանի: Երկրորդ, Այդ եկեղեցուն կտակում եմ երեսուն հազար ո. (30,000) իբրև անձեռնմխելի գումար: Այդ գումարի տոկոսների $\frac{2}{3}$ -ը գործազրել իւրաքանչիւր տարի բաժանելով փողով Բագու քաղաքի աղքատ հայ-լուսաւորչականներին Չատիկին և ս. Մկրտութեան, իսկ մնացած $\frac{1}{3}$ -ը տալ նպաստ 150-ական ուրբլի Բագու քաղաքում բնակուող հայ-լուսաւորչական ամուսնացող աղջիկներին իրերով կամ կանխիկ փողով. այդ տոկոսների բաշխումն պէտք է լինի համաձայնութեամբ այդ եկեղեցու գործակալի, երէցփոխի և երեք ընտրուած անձանց, որոնք ընտրուած են ձխականներից երէցփոխի հետ միասին՝ համաձայն Բագու քաղաքի հայ-լուսաւորչական եկեղեցու կարգադրութեան: Երրորդ՝ Այդ նոյն եկեղեցուն կտակում եմ տասն և հինգ հազար ուրբ. (15,000) իբրև անձեռնմխելի գումար այն պայմանով, որ տոկոսիքներին $\frac{2}{3}$ -ը երկրորդ կէտում յիշատակուած անձինք իւրաքանչիւր տարի ս. Թադէոսի տօնին գնեն փայտ և ալիւր և բաժանեն աղքատանոցում ապրող հայ-լուսաւորչական աղքատ անձանց, որի շինութիւնը գտնուում է իբրև հարկան այն տեղի, որտեղ ենթադրուում է կառուցանել եկեղեցին իմ հաշուով, իսկ $\frac{1}{3}$ -ը բաժանել Բագու քաղաքի հայ-լուսաւորչական հոգևորականութեան, պարտաւորեցնելով նրանց ս. Թադէոսի և առհասարակ բոլոր մեռելոց տօններին հոգեհանգիստ կատարել իմ հանգուցեալ եղբայր Թադէոս աւագ քահանայ Բուդաղեանի գերեզմանի վրայ,

որ գտնւում է ս. Լուսաւորիչ եկեղեցու բակում: Չորրորդ՝ Բազուի Քաղաքային Ինքնավարութեան կտակում եմ յիսուն հազար ո. (50,000) այն պայմանով, որ այդ գումարով կառուցուի հողեկան հիւանդների համար հիւանդանոցի շինութիւն և տախտակի վրայ մակագրուի հետևեալը. «Բազուի Քաղաքային եղբ. Բուղաղեանների հիւանդանոց հողեկան հիւանդների համար»: Եթէ Քաղաքային Ինքնավարութիւնը չցանկանայ այդ հիւանդանոցը պահպանել իւր հաշուով, այդ դէպքում իմ կտակակատարներին վերապահում եմ իրաւունք գործադրել այդ գումարը բարեգործական նպատակով յանուն եղբ. Բուղաղեանների: Հինգերորդ՝ Նոյն Քաղաքային Ինքնավարութեան կտակում եմ վաթսուն հազար ուսւլի (60,000) Բազու քաղաքում կառուցանելու երկու շինութիւն էժանագին բնակարաններ անուան տակ միմեանցից բաւական հեռու թաղամասերում: Իւրաքանչիւր բնակարան պէտք է բաղկացած լինի երկու սենեակից և մի խոհանոցից: Այդ շինութիւններից մէկը պէտք է վարձով տալ բացառապէս միայն հայ-լուսաւորչականներին, իսկ միւսը այլ ազգութիւններին: Այդ բնակարաններից ստացուած եկամուտը, զուրս գալով ծախքերը, պէտք է իւրաքանչիւր տարի Չատիկին և ս. Մկրտութեան բաժանուի աղքատներին, կէսը հայ-լուսաւորչականներին, իսկ միւս կէսը այլ ազգութիւններին: Աղքատներին այդ շինութիւններում բնակարան տալը, նոյնպէս ևս եկամուտներից ստացուած գումարը աղքատներին բաժանելը պէտք է լինեն այն անձանց ձեռքով, որոնց կրկնազօրի Քաղաքային Ինքնավարութիւնը, միասին իմ կառուցանելի եկեղեցու գործակալի և երէցփոխի հետ: Վեցերորդ, Նոյն Քաղաքային Ինքնավարութեան կտակում եմ մի հարիւր հազար ուսւլի այն պայմանով, որ այդ գումարի քառասուն հազարի տոկոսիքով հաստատուի չորս թոշակաւորներ Բուղաղեան եղբայրների անունով, որոնք պէտք է սովորեն Ռուսական կայսրութեան համալսարաններում, որոնցից երկուսը լինեն հայ լուսաւորչական թոշակաւոր, իսկ երկուսն էլ այլազգի: Քառասուն հազար գումարի տոկոսիք-

ներով Բուլղարիան եղբայրների անունով հաստատուեն
 չորս թոշակաւոր տեղական Ալէքսանդր III կայսեր կլասի-
 քական գիմնազիոնում, երկուսը աղքատ հայ-լուսաւորչա-
 կաններից և երկուսն էլ այլ ազգութիւններից, իսկ մնա-
 ցած տոկոսները զործադրել վճարելով Բուլղարիան եղ-
 բայրների անունով ուսման վարձ աղքատ աշակերանների
 համար, կէսը հայ-լուսաւորչական, իսկ միւս կէսը այլ
 ազգութիւնների: Իսկ քսան հազար (20,000) ու գումարի
 տոկոսները զործադրել եղբ. Բուլղարիանների անունով
 վճարելով ուսման վարձ Մարիամեան օրիորդաց գիմնա-
 զիայի աշակերտուհիների համար, կէսը աղքատ հայ-լու-
 սաւորչականների, իսկ կէսը աղքատ այլազգիների:
 Եօթներորդ՝ Խ. Էջմիածնի Հոգեւոր ձեմաւանիսն (Ֆէորգեան
 ձեմաւան) կտակում եմ քսան հազար ուրբի (20,000):
 Այդ գումարի տոկոսիքներով պէտք է կրթուեն թոշակա-
 ւորներ, որոնք ցանկանում են իրենց նուիրել հոգևոր կոչ-
 ման, սրանցից նոքա, որոնք ցոյց կըտան առանձին յառա-
 ջադիմութիւն՝ ուղարկել բարձրագոյն դպրոցներ կատարե-
 լագործուելու Աստուածաբանական գիտութեանց մէջ:
 Արեւորդ՝ Շամախու քաղաքային ինքնավարութեան կտա-
 կում եմ քառասուն հազար ու. (40,000) ջրանցք շինելու.....
 Իններորդ. Երուսաղէմի ու Յակոբի հայ-լուսաւորչական
 վանքին տասն և հինգ հազար ուրբի (15,000): Տասներորդ.
 Բագուի Ռուսաց Բարեգործական ընկերութեան տասն հա-
 զար ուրբի (10,000): Տասներմիերորդ. Բագուի Հայոց
 Բարեգործական Ընկերութեան քսան հազար ուրբի այն
 պայմանով, որ տոկոսները այդ գումարի զործադրեն բա-
 րենպատակ զործերի համար համաձայն ընդհանուր ժողովի
 որոշման. ի դէպս այդ ընկերութեան փակման, այդ գումարի
 կէսը անցնում է ի սեպհականութիւն Երուսաղէմի ու Յա-
 կոբեանց վանքի, իսկ միւս կէսը ու Էջմիածնի հայ-լուսա-
 ւորչական վանքին Տաճարի վերանորոգութեան համար
 զործադրելու: Տասներկուերորդ. Սաղիանի գիւղի, որտեղ
 ես եմ ծնուել, գիւղական հասարակութեան կտակում եմ
 տասն հազար ուրբի (10,000) այն պայմանով, որ գու-

մարը տոկոսաբեր թղթերով պահպանուի Բագուի ճիւղի պետական քանկում, որի տոկոսները իւրաքանչիւր տարի բաժանուի զիւղի աղքատներին հաւասար կերպով հողալուքացառապէս պետական և հողային տուրքերը: Տասնեւերեւեորդ. Բագուի Քաղաքային Ինքնավարութեան կտակում եմ քսան և հինգ հազար ո. (25,000) այն պայմանով, որ այդ գումարը վերածուի տոկոսաբեր թղթերի Քաղաքային Ինքնավարութեան անձանց հայեցողութեամբ, որպէս զի յիսուն տարուայ ընթացքում, իմ մահից սկսած, տոկոսները միացնուին մայր գումարին, որից յետոյ ամբողջ գումարի $\frac{5}{4}$ -ը անցնում է Բագուի Քաղաքային Ինքնավարութեան, որի տոկոսիքներով պէտք է պահպանի աղքատ ծերացած երկսեռ անձանց համար ապաստանարան, կէսը հայ-լուսաւորչականներից, իսկ կէսը այլ ազգութիւններից, սակայն պայմանով՝ որ նոքա լինեն տարբեր շինութեանց մէջ և տարբեր թաղամասերում: Մնացած քառորդ մասը նոյն գումարի Բագուի Քաղաքային Ինքնավարութիւնը պէտք է յանձնի Շամախու Քաղաքային Ինքնավարութեան հիմնելու Շամախի քաղաքում և պահպանելու արհեստագիտական դպրոց, Գրանք պէտք է կոչուեն Բագուի և Շամախու Քաղաքային եղբ. Բուզաղեանների հաստատութիւններ: Տասնեւչորսերորդ. Շամախու Քաղաքային Ինքնավարութեան կտակում եմ տասն հազար ուրլի (10,000) իբրև անձեռմխելի գումար, որ տոկոսիքներով քաղաքային դպրոցում պէտք է պահպանուին թոշակաւորներ իմ հանգուցեալ եղբայր Թադէոս աւագ քահանայ Բուզաղեանի անունով, ըստ որում ոչ միայն նրանց ուսման վարձը՝ այլ իւրաքանչիւր տարի տալ նրանց ուսումնական պիտոյքներ և մի զոյգ հազուստ դպրոցի պահանջուած ձևով, թոշակաւորներից կէսը պէտք է լինեն հայ-լուսաւորչականներ, իսկ կէսը միւս ազգութիւններից»*):

*) Կտակի կէտերը թարգմանաբար ճշտութեամբ քաղել ենք կտակից, որի պատճէնը գտնուում է Սինօզի Տնտեսական սեղանի 1900 թ. № 31 գործի մէջ: ձան. Բ. Վ.

Կտակի միւս մասերը վերաբերում են հանգուցեալի ազգականներին, որոնց յականէ յանուանէ խոշոր գումարներ է կտակել:

Կտակակատարներ նշանակուած են՝ տոհմային պատուաւոր քաղաքացի Երուանդ Թաղէոսեան Բուղաղեան, երդուեալ հաւատարմատար Բօղղան Մովսիսեան Դօլուխանեան, ազնուական Ստեփան Գրիգորեան Այվազեան, Բազուի վաճառական Գրիգոր Սաղաթէլեան Ասլանեան, Բազուի վաճառական Սերոպ Մելիքեան:

Այս օրինակելի կտակի կէտերը մեծ մասամբ կատարուած են: Ս. Էջմիածնի Գէորգեան ձեմարանին հասանելիք քսան հազար ուրլին 1901 թ. Յուլիսին ստացուել է կտակակատարներից և մուտք է գրուած Մայր Աթոռի նոյն տարուայ դրամական մատեանում՝ փոխարինելով 4⁰/₀ բենտաների: Այդ գումարի ⁰/₀/₀ ները տրուած է Գ. ձեմարանին որդեգիրներ պահելու:

Ենովք Բուղաղեանի, ազգասիրական հոգևով լցուած հայի, բարի յիշատակը միշտ կմնայ անջնջելի բոլորիս սրտում և գեղեցիկ օրինակ կզառնայ յեանորդ սերնդի համար:

Բարզէն վարդապետ.

